

# ՔՈՎԻԴ 19-ի ստուգում

## Ո՞վ պետք է ստուգվի

Յուրաքանչյուր անձ, ով ունի մրսաձուլություն կամ գրիպանման ախտանիշներ, նույնիսկ եթե դրանք շատ մեղմ են, հնարավորինս արագ պետք է ՔՈՎԻԴ-19 ստուգում անցնի: ՔՈՎԻԴ 19-ի ախտանշանները ներառում են՝

- Բարձր ջերմություն, դող, գիշերային քրտնարտադրություն
- Շնչառական ախտանիշներ, ինչպես օրինակ, կոկորդի քերծում, քթահոսություն, շնչարգելություն, համի և հոտի կորուստ
- Այլ ախտանշաններ, ներառյալ մկանային և հոդային ցավեր, փորլուծություն, սրտխառնոց, փսխում և ախորժակի կորուստ:

## Ի՞նչ է ստուգումը ներառում?

- Ստուգումն անվճար է, հեշտ և արագ
- Եթե դուք ուղեգրվել եք ստուգման կլինիկա, խնդրում ենք վերցրեք ձեր հետ ուղեգիրը: Շատ կլինիկաներում այն անհրաժեշտ չէ:
- Ստուգման և շնչառական կլինիկաներում անձնակազմը կներկայանա դիմակներով, արտահագուստով, ձեռնոցներով, դիմապաշտպան վահանակներով:
- Անձնակազմը կհարցնի ձեզ ձեր ախտանշանների մասին:
- Քերուկը վերցվում է քթի ներսից և կոկորդից:

## Ի՞նչ անել ստուգումն անցնելուց հետո

- Դուք պետք է մնաք տանը (ինքնամեկուսանաք) մինչև կստանաք ստուգման պատասխանը և լավ կզգաք:
- Դուք չեք կարող տնից դուրս գալ, բացառությամբ, եթե անհրաժեշտ է բժշկական միջամտություն կամ շտապ օգնություն: Այցելուներ չեք կարող ընդունել:
- Եթե ձեր ախտանշանները վատթարանում են (օրինակ դժվարություն շնչելիս) զանգահարեք երեք զրո (000), տեղեկացրեք շտապ օգնության անձնակազմին, որ դուք ՔՈՎԻԴ 19 ստուգում եք անցել:
- Եթե դուք բնակվում եք ուրիշների հետ համատեղ, դուք պետք է ինքնամեկուսանաք առանձին սենյակում: Կրեք բշկական դիմակ, երբ դուք նույն սենյակում եք և պահպանեք 1.5մ հեռավորություն:
- Պահպանեք լավ հիգիենա: Հաճախ լվացեք ձեռքերը: Ծածկեք ձեր հազը և փռոցը արմունկով կամ անձեռոցիկով:

## Ո՞րտեղ կարող եմ գտնել ավելի շատ տեղեկություն ինքնամեկուսացման վերաբերյալ?

<https://www.health.nsw.gov.au/Infectious/covid-19/Pages/resources.aspx>

- Եթե դուք շփվել եք ՔՈՎԻԴ 19-ով վարակված անձի հետ, դուք պետք է 14 օր մնաք տանը՝ տվյալ անձի հետ վերջին հանդիպումից հաշված (նման շփումը ներառում է ապրել նույն բնակարանում կամ դեմ առ դեմ անց կացնել ավելի քան 15ր ժամանակ կամ 2 ժամ ընդհանուր փակ տարածքում ՔՈՎԻԴ 19-ով վարակված անձի հետ՝ նրա հիվանդանալուց 48 ժամ առաջ):
- Ինքնամեկուսացումը պարտադիր է մոտ շփում ունեցած բոլոր անձանց համար, նույնիսկ եթե դուք տվյալ պահին լավ եք զգում կամ ձեր ստուգման պատասխանը բացասական է:

## Ինչպե՞ս կարող եմ ստանալ իմ պատասխանը

- Սովորաբար ստուգման պատասխանը կստանաք 24-48 ժամերի ընթացքում, բայց խնդրում ենք նկատի ունենալ մինչև 72 ժամ:
- Եթե ստուգումն անցել եք շտապ օգնության բաժանմունքում կամ ՔՈՎԻԴ 19 հանրային կլինիկաներից մեկում, կարող եք ձեր ստուգման բացասական պատասխանը ստանալ SMS-ով (հեռախոսային նամակով), եթե գրանցվեք ՔՈՎԻԴ 19-ի SMS-ով արդյունքների ստացման ծառայության համար: Եթե չգրանցվեք, զանգ կստանաք ձեր տեղական առողջապահական տարածքի հանրային առողջապահության աշխատակցի կողմից:
- Եթե ստուգումն անցել եք ձեր GP-ի (ընտանեկան բժշկի) մոտ կամ այլ հաստատությունում, ձեր բժիշկը կհայտնի ձեզ ստուգման արդյունքները:

## Ի՞նչ անել, եթե իմ ստուգման արդյունքը դրական է

- Նոր Հարավային Ուելսի (NSW) Առողջապահության Ծառայությունը հոգ կտանի ձեր մասին: Ձեր բուժումն անվճար է, եթե անգամ Medicare չունեք:



